Իր հերթին, Հ. Հ. Պատիրակութիւնը մեկնում էր իրական փաստից. Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը իրողութիւն է, Հայաստանում ապրում է մէկ միլիոն ժողովուրդ. Երևանում կայ Խորհրդարան, կառավարութիւն, բանակ. երկիրը հետզհետէ կազմակերպւում է պետականօրէն: Մինչդեռ, Թիւրքահայաստանը ամայի է. ո՛չ ժողովուրդ կայ, ո՛չ կառավարութիւն: Հետևաբար, անհրաժեշտ է ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետութեան վրա, իբրև հայկական պետութեան կորիզի, և հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատուածների միացման ձևով:

Կողմերը խօսում էին տարբեր լեզուներով և իրար չէին հասկանում: Այս տրամադրութիւնից օգտւում էին չարամիտ մարդիկ՝ թունաւորելու համար զաղութահայ ազգայինների միտքը նրանով, որ, իբր թէ, դաշնակցականներն են միայն այդպէս մտածողները, դաշնակցական պարագլուխները, որոնք «Արարատեան Հանրապետութիւնը» գործիք են դարձրել իրենց կուսակցական նպատակների, ձգտում են բռնագրաւել Թիւրքահայաստանը*), խլել Պօղոս փաշա Նուպարից ազգային գործերի ղեկավարութիւնը և այլն: Քաղաքական ընդհանուր տեսակէտների տարբերութիւնը, կուսակցական նեղմտութիւնը և անձնական նախանձն ու քէնը Փարիզում առաջացրին խեղդիչ մթնոլորտ, որի թունաւոր հոսանքները հետզհետէ սկսեցին հասնել և Երևան:

Մայիս 28-ի յայտարարութիւնը բոլորովին անսպասելի էր Ազգ. Պատիրակութեան համար: Պօղոս Նուպարն ու իր գործակիցները սկզբունքով դէմ չէին նման քայլի: Ընդհակառակը, ինչպէս տեսանք, դեռ նոյեմբ. 30-ին նրանք յայտարարել էին «ամբողջական Հայաստանի անկախութիւնը»: Եւ այժմ էլ գործում էին այդ ուղղութեամբ, բայց նրանց դայրացնողը այն էր, որ յայտարարութիւն անողը Երևանն էր և ոչ իրենք, երկրորդ՝ որ Երևանի կառավարութիւնը ինքդինքը հռչակում էր միացեալ Հայաստանի կառավարութիւն, այն ինչ բոլոր մարզկային և աստուածային օրէնքներով միացեալ Հայաստանի կառավարութիւնը պէտք է կազմէր Փարիզում և անպայման Պօղոս փաշա Նուպարի նախագահութեան տակ:

---

*) Արժէ արձանագրել մի պատմութիւն, որ անում էր հանգուցեալ Արմէն Գարօն: Ազգ. Համագումարի ժամանակ, երբ քննւում էր թիւրքահայկական գաւառների զրաւման հարցը, Արմէն Գարօն ասում է, թէ շուտով Հայաստանի կառավարութիւնը կը զրաւէ Էրզրումը:

— Ի՞նչպէս թէ կը զրաւէ, զարմանում է Պօղոս Նուպարը՝ յանկարծակիի եկած:

— Հէնց այնպէս, զօրք կուղարկէ ու կը զրաւէ, պատասխանում է Արմէն Գարօն: Իմ եղբայրն էլ հայկական բանակում է. յոյս ունեմ առաջին Էրզրում մտնողներից մէկն էլ նա կը լինի:

— Mais c'est une occupation! (բայց այդ բռնագրաւում է) վրդովւած բացականչում է փաշան:

Եւ տեսնելով Արմէն Գարօի չարաճճի դէմքը՝ ձեռքը զարնում է սեղանին ու —

— Այո՛, այո՛, բռնագրաւում է այդ, և ես կը բողոքեմ դրա դէմ... Ես կը բողոքե՛մ...

Հայաստանի զօրքը պիտի գրաւէր Էրզրումը, և Ազգ. Պատիրակութեան նախագահը սպառնում էր բողոքել...